

UN

6283

Handwritten text, possibly a title or description, written in cursive script.

891.99

U-75

1910

Ա Ս Օ

ԴԱՐՁԵԱԼ ՄԵԿԸ

ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐ


2011

891.99
—
Կ-75

ԳՈՒԻՍ
Տպագր. ՆՇԱՆ-ԳԱԳԻԿԵԱՆ

2003

1910



Ա.Ս.Օ

891.99

Ա-75

ms.

ԴԱՐՁԵԱԼ ՄԷԿԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ



Կ. ՊՈՒԼԻՍ
Տպագր. ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

1910

(842)

~~1787~~

29610 - 4. 1.



135
39

13152-58


ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԲ

- ԳԷՈՐԳ ԱՊԷՐ (Ծերունի անգործ բանուր, ընտանիքի հայր)
- ՄԱՇՈ (Ծերունիի ամուսինը)
- ՏԻԳՐԱՆ (30 ամեայ զաւակը)
- ՍՕՆԱ (Մրա ամուսինը)
- ՎԱՐԳԱՆՈՅՇ (Տիգրանի 15 ամեայ փոքր)
- ՏԻՐԱՆ (Տիգրանի 8 ամեայ որդին)
- ՍԻՐԱՆ (Տիգրանի 6 ամեայ աղջիկը)
- ԱԻԻԿ (Ծառայ-սպասաւոր հարուստի)

Ոստիկաններ եւ զինուորներ

(Առաջին անգամ ներկայացւած Աստրազարում.
1910 Յուլիս 31-ին)

ԴԱՐՁԵԱԼ ՄԷԿԸ



ՊԱՏՆԿԵՐ Ա.

(Յենր ներկայացնում է մի անպանոյն եւ աղբասիկ սենեակ, պատերի պաստառ բոքերը պաստառուած, պատուանկները բոքով ծածկուած, անկիւնի մի բախտի վրայ նստած է Գեորգը. Սիրանը կարի մեքենայի մօտ, Սօնան՝ սեղանի առաջ կարում են, փոքրիկները մեր ընդ մեր կարգում են ու վազվզում, սենեակը ցուրտ է, համի է փչում, Մառտին դաստորութեամբ է զբաղուած եւ կրակ խառնում. գիշեր է, լամբը աղօս կերպով է լուսաւորում:)

ԳԷՈՐԳ. — Բազում աշխատեցաք եւ ոչինչ կալաք... Տէ՛յ աշխարհ... երբ դեռ հազիւ մանկական լեզուդ սկսի թոթովել, սկսես աշխատել, չարչարել ու տանջուել, ու գաս սպիտակ մազերով ծածկուած գլխով, նստիս ձմեռուայ ցրտի առաջ,

քար ու քանդ եղած մի տան մէջ, անպատեհաբար, քաղցած փորով... անճար մնաս, ձեռներդ կրճքիդ խաչես, գործ խնդրես ու որոնես չգտնես... աշխատանք չտանք քեզ, քեզ հետ ամբողջ մի ընտանիք սովամահի դատապարտեն. խնչքան դառն է այս... գոնէ՛ մի քանի սեւ դրամ էլ չկայ գնամ մի քիչ խմեմ, գինովնամ ու այս ցաւերը մոռնամ... :

ՄԱՇՈ. — Տունը հաց չկայ, երեխաների հագին զգեստ, վառարանում փայտ կամ ածուխ, տանտէրը կանգնել է հոգիներս է ուզում վարձքի համար, դու էլի խմելու հոգս քաշիր մի բաժակ օղիի կամ գինու համար և ա՛խ ու վախ արա... :

ԳԷՈՐԳ. — Մաշօ՛, Աստուած է վկայ որ դու սիրտ չունես, այդ ի՞նչ մեղադրանք է որ անում ես. ես ասում եմ իմ հոգւր, իմ ցաւը խեղդելու ու մոռնալու համար ուզում եմ, փափագում թմրացնել, մեռցնել իմ միտքը ու զգացումները... :

ՄԱՇՈ. — Բայց աւելի լաւ չի՞ լինի որ գնաս գլուխդ սարուքարին զարնես ու

մի գործ, մի ճար ճարակ գտնես, կամ թէ գնաս պարոնին խնդրես քեզ գործ տայ. քե՞զ ինչ գործադուլը, աշխարհի բաները դ՞ուր պիտի ուզգես :

ԳԷՈՐԳ. — Գործադուլ, գործադուլ ասում ես ու օձիքը բաց չես թողնում : Գործադուլը մէկն է մեր փրկութեան միջոցներէց. և մենք բնկերներով վճուել ենք ամէն գնով առաջ տանիլ. ես չեմ որ պիտի դրժեմ խոստումս, պիտի դաւաճանեմ՝ բնկերներխ... եթէ ներկայ տեստական կարգերի մէջ չարաչար և յարատեւ աշխատանքը ընդունակ լինէր մեզ կերակրելու և ապրեցնելու, ապա՛ Սօնայի, Վարդանոյչի, է՛լ չեմ ասում Տիգրանի գործերը, բաւական էին մեզ նման տասն ընտանիքներ պահպանելու :

ՎԱՐԴԱՆՈՅՇ. — Մայրի՛կ, հայրիկը ճիշտ է ասում, մեր աշխատանքի արդիւնքը մերը չէ, այլ դարուս պաշտօնական աւազակներին, նշանազգեստ և վսեմաչուք գողերին... այսօր մի տեսնէիր և լսէիր թէ գործարանատէրը ի՞նչ լպլերչ լըպլերչ կը հայհոյէր մեզ... :

ՏԻՐԱՆ. — (Գիւրբ ցուցնելով Գեորգիին)
Մեծ հայրի՛կ, տե՛ս այս պատկերը, նայիր
թէ ի՛նչպէս զգեստներ է հագել սա փոք-
րիկ աղան :

ՍԻՐԱՆ. — (Մօտենալով) Տեսնեմ, Տի-
րա՛ն, տեսնեմ, ես էլ իմ խորձիկի համար
տեսնեմ . . .

ՏԻՐԱՆ. — Ես քո խորձիկին պիտի
սպաննեմ :

ՍԻՐԱՆ. — Ինչո՞ւ, չեմ թողնի, մայ-
րի՛կ, շայրիկ ջան (սկսում է լաց լինել եւ
մօրք հղանցներին փառի) :

ՍՕՆԱ. — (Շարունակելով կարել ձեռ-
նով եւ մեքենայով) .— Օ՛հ, այս ի՛նչ զու-
լում ձմեռն է, ի՛նչ սուր ու ծակող ցուրտ
գիշեր . . . Մատներս սառեցին, էլ կար ու
ասեղ բռնել չեմ կարող . . . ասպէս արգա-
րութիւն, այսպէս էլ կեանք կը լինի՛ հա-
պա. հիմա, հէնց այս րոպէին՝ այս չըջաղ-
գեստի բաղդաւօր տիրուհին իր շքեղա-
զարդ դանիւծի մէջ, կիսամերկ, բաց
կուրծքով եւ ուսերով, տաքութիւնից այ-
պէս կը նեղւի որ հովհար կը գործածէ,
մինչդեռ մենք . . .

ԳԷՈՐԳ. — Մեր էլ ատամները իրար
կը բաղխին սաստիկ ցրտից, որովհետեւ
նրա այդկերպ ապրելը, այդ կեանքն ու
ձոխութիւնը ապահոված է մեր այս վի-
ճակով :

ՄԱՇՕ. — Այդպէս մի ասէք, այս մեր
բալզն է, Աստուածը մեր ճակատին այդ-
պէս է գրել, հօ ամէն մարդ հարուստ
չպիտի լինէր :

ՎԱՐԳԱՆՈՅՇ. — Այդպէս Աստուած
չկայ, այդ մեր Աստուածը չէ, այլ հարուստ-
ների, գրկողների, հարստահարողների
Աստուած . . . քեզ ս՛վ ասաց որ մեր ճա-
կատին այդպէս է գրուած, այժմ այդ տե-
սակ բաների էլ դրամ չեն տար, այժմ ա-
մէն մարդ կարող է ճակտին գրել ու աւ-
րել :

ՄԱՇՕ. — Սո՛ւս, սուս արա, լռի՛ր,
այդպէս բաներ էք խօսում, նրա համար
չէնք շնորքը, բարիք ու բերքը պակասեց
և օրերով անօթի ենք մնում . . . Գլուխդ
կախի՛ր և գործդ վերջացո՛ւր, շուտով
ժամը տասներկուօր կը լինի : Տիկնոջ սպա-

սաւորը քիչ առաջ եկաւ , ասում էր որ չըջազգեստը մինչեւ 12ը հասցնելու է , և այս (ցոյց տալով երջազգեստը) յատկապէս այս գիշերուան համար է սպասրաստել տալիս :

ՍԻՐԱՆ. — Մայրի՛կ , ց՛ւրտ է , ասա տիկ ցուրտ... մըտում եմ...

ԳԷՈՐԳ. — Ինձ մօտ արի Սիրան , ինձ մօտ արի , քեզ վերարկուիս տակ առնեմ , ձեռներդ ձոցս զի՛ր և տաքացիր (Սիրանը մօտենում է Գեորգին , նստում նրա ձեկերի վրայ , կծկւում գլուխը պահում է) :

ՏԻՐԱՆ. — Մայրիկ , ես էլ եմ մըրտում... այս սաստանայի ձայն հանող քաւմին ի՛նչ է ուզում մեզանից , (Քամին ուժեղ կերպով փչում է , պատուհանները շարժւում են , բուղբերը պատուում , հոսանքը զանազան ձայներով լեցնում սենեակը) :

ՄԱՇՕ. — Մայրիկ մատաղ քեզ , արի պառկիր անկողնի մէջ , գլուխդ ծածկիր վերմակով որ տաքանաս . (Համբուրելով

Տիրանին եւ քնեաբար փայփայելով նրա գլուխը) :

ՏԻՐԱՆ. — Ախր անօթի եմ... հաց չկերանք... հաց ուտենք յետոյ պառկինք...

ՍԻՐԱՆ. — Ես էլ քաղցած եմ... հաց ուտենք... հաց...

ՄԱՇՕ. — (Մի կողմ ձեռները կցելով ու լալագին) Ի՛նչ սեւ կապեմ ես . ի՛նչ հող տամ գլխի , չկա՛յ... ի՛նչ պատասխան տամ... գոնէ Տիգրանը չեկաւ... (Փոքրիկները հա՛ց հա՛ց աղաղակելով լալիս են , Վարդանոյե եւ Սօնան արտաւում են : Այս ժամանակ դրսից լսելի է լինում ժամացոյցի 11րդ . զանգակահարումը , դուռը բաց է անում Աւիկ ծառան եւ ասում) :

ՊԱՏՅԱԿԻ Բ.
Նոյնք եւ Աւիկ

ԱԻԻԿ. — Սօնա քոյրիկ , տիկինս շատ է զայրացել , ձեռն ընկնիս քեզ կը գզգզէ , յուսով չըջազգեստը բե՛ր : (Գնում է) :

ՍՕՆԱ. — Ձեռներս չեն բռնում , ասեղը

մասներիս միջից վայր է ընկնում, ի՞նչպէս
վերջացնեմ: (Լալազիկ):

ՄԱՆՕ. — (Մօսենալով) Մի՛ լացեր,
գաւա՛կս, մի՛, Աստուած ողբումս է, նա
իր ստեղծածներին չի մոռանայ, (դիտելով
կարուածքը եւ վերցնելով նրա մի կտորը)
այս ի՞նչ բիծեր են... ա՛ն տունս քանդ-
ւեց, էլ ի՞նչպէս խօսք հասկացնենք դժ-
ուարահաճ արկնոջը, նա աշխարհը կը կոր-
ծանի մեր գլխին...

ՍՕՆԱ. — Այդ իմ արցունքների գո-
հար կաթիլների բիծերն են, արասներն
են... աղքատի արցունքի կայլակներն
անգամ, չնայած իրենց մաքրութեան և
բիւրեղութեան, դարձեալ կը բժաւորեն
հարուստ բաղդաւորների ձիւնափայլ
զգեստները... հահ մեր վիճակը. նոյնիսկ
լացել էլ չենք կարող... (Հեկեկում է:
Գրսից քամին է փչում, նրազը մարում է):

ՎԱՐԴԱՆՈՅՇ. — (Շարունակելով կա-
րել) Մի՛ լա՛ց լինիր Սօնա, մի՛ իմ խեղճ
իմ դժբաղդ հարս, այս սեւ օրերին կը
յաջորդեն պայծառ օրեր, այս ձիւն ձրմ-

բան կանաչ տաք գարուն... (Երգում է):

Քաղցածների համր քանակներ,
էլ այտուիտ չեմ հաւերեր,
Ըմբոս բողբ կը բարձրացնեմ,
Բռնաւորներ կը սարսափեն:
Չիւն ձնեռ կ'երբայ, գարուն կը գայ,
Կարմիր այգը կը շողշողայ,
Վերջ կը գտնեմ փայցն ու հոգսը,
էլ չեմ տրի փող ու սսանոխ:

ՊԱՏԿԵՐ Ք.

Նոյնիսկ եւ Տիգրան

(Երգի վերջանալուն դուռը կը բաղխեն,
Մաւօսի մօտենալով կը բացէ, Տիգրանը ներս
է մտնում ձեռքին մի կապոց հագ եւն.,
փոքրիկներ վրայ են վազում):

ՏԻՐԱՆ. — Հայրիկ եկա՛ւ, հայրիկ ե-
կա՛ւ...

ՍԻՐԱՆ. — Հայրիկը հաց բերեց, հաց
... պանիր...

ՄԱՇՈ. — Դէ՛, լաւ, մի թիչ սպասեցէք, ձեզ համար սեղան՝ պատրաստում, (Փոքրիկները խլում են հացը եւ իւրաքանչիւրը մի մի պասառ առնելով գնում են Գեորգի մօտ, սկսում ուտել եւ վերջը նսած տեղերինն ֆնում են):

ՏԻԳՐԱՆ. — (Մօտենալով Սօնաին եւ Վարդանոյշին, ապա գլխարկը հանելով ընկնում է արձուի վրայ) Աշխատի՛ր, հա՛ աշխատի՛ր, քանի շունչդ վրադ է, քանի ձեռներդ բռնում են, մինչե՛ւ գերեզման, և այդ ամենի փոխարէն, դժոխքն է քո բաժին, արցունք քո գինին և վիշտը կերակուր... Աշխատէ՛ք (տօսքը նրանց ուղղելով) ցերեկը գործարաններում գիշերը խրճիթում:

ՄԱՇՈ. — Ինչ անենք զաւակս, որ չաշխատինք ո՛վ մեզ հաց կուտայ:

ԳԷՈՐԳ. — Թող տո՛ւր, կնիկ, ՚ի սէր Աստուծոյ թող քո պառուական քարոզները: (Իստուգելով Տիգրանին) Ասա՛ ինձ, Տիգրա՛ն, զաւակս, ինչ եղաւ գործադուլի խնդիրը, լսեցի այսօր բանուորութեան

ներկայացուցիչներին կանչել են դրամատէրերը, իբրեւ թէ փոխադարձ համաձայնութեան գալու, գնացի՛ն արդեօք, և ի՛նչ արդիւնք ունեցաւ:

ՏԻԳՐԱՆ. — Գնացին հայրիկ, գնացին բայց այլեւս չվերադարձան:


ԳԷՈՐԳ. — (Զարմացած) Ինչո՞ւ, ի՛նչ պատահեց որ...:

ՏԻԳՐԱՆ. — Ոչ մի՛ անսպասելի բան, այլ շատ սովորական. գործը վիժեցնելու համար գործատէրերը միացած կառավարութեան հետ մտածում են թակարդի մէջ ձգել բանուորութեան առաջնորդող ուժերին, և դրա համար նրանց հրաւիրում բանակցութեան, և մեր ընկերները հազիւ որոշուած տեղը հասած, չըջպատում են զօրքերով ու առաջնորդում կեդրոնական բանար...:

ԳԷՈՐԳ. — Այ վատեր, ցածոգի խաւերաներ ձեզի:

ՏԻԳՐԱՆ. — Այդ բոլորը չէ՛, գործատէրերը կառավարութեան միջոցով յայտարարեցին որ մինչեւ երկու օր եթէ բան-

18152-58
(35 39)



թողնեք չգնան ու իրենց գործը վերսկը-
սին, իրենք արձակած կը նկատուին...

ՄԱՇՕ. — Վա՛խ, վա՛խ, ի՛նչ ձիւն ե-
կաւ գլխներիս, սա գործադուլ-մործա-
դուլ հնարողին ի՛նչ ասեմ :

ՏԻԳՐԱՆ. — Մայրիկ, չհասկցած բանի
մասին մի խօսիր, գործադուլ հնարողները
վատ բան չեն արել, առանց կուրի ոչինչ
չի փոխել այս աշխարհի վրայ, հէնց ինք
կեանքը մի կուր է, և կուռում միշտ չեն
յաղթել. միշտ բազդաւոր և յաջող չեն
լինել : Թէեւ երեւութապէս մենք պար-
տուած ենք համարոււմ, բայց էապէս
մենք յաղթել ենք, մեր կուր սկսելը,
ըմբոստութեան դրօշը պարզելու օրից,
մենք միշտ յաղթանակներ ենք տարել :
Դու ուզում ես մեզագրել մեր այն առաք-
եալներին, որոնք մեզ սովորեցրին մարդ
լինելու, մարդ ապրելու կերպն ու ձևը.
ասա՛, ո՞վ կարողացու 14-16 ժամի չարա-
չար աշխատանքի փոխարէն մեզ տալ 8
ժամեայ բանւորական օրը, ո՞վ օրէնք
դարձրեց բանւորական այս ու այն պա-

հանջները, բարենորոգումները, վերջապէս
ո՞վքեր են որ իրենց դիւցազնական զոհա-
բերութիւններով պատրաստում վաղւայ
փառաւոր ապագան, վաղւայ երջանիկ
և բարօր վիճակը... ներկայ ժամանակա-
ւոր անյաջողութիւնները, բռնազբօսիկ
յետադարձը անկարող են մարելու մեր
կորովը, անկարող բանւորութեան անըս-
պառ կենսունակութեանը սահման դնելու :

ՄԱՇՕ. — Բայց մե՛նք, մե՛նք խեղճ
ենք, փոքրիկները անօթի կը մնան...

ՍՕՆԱ. — Հերի՛ք, Տիգրա՛ն, հերի՛ք է,
ճիշտ է ասում մայրիկը, մի ընտանիքի
յոյսն ու ապաւէնն ես, այդպէս մտածե-
լով, այդպէս գործելով դու մի օրից մի
օր անխուսափելի վտանգը կը բերես մեր
գլխին, և մեր դուռը փակ կը թողնես,
մեր աչքերը լացացնելով կը կուրացնես...
բաւական է :

ՏԻՐԱՆ. — Հայրի՛կ, ինձ համար կրկ-
նակօշիկ գնիր, դպրոցում չեն թողնում,
այսօր վարժապետը, անտեսը ասացին որ
ցելստոս ոտներով չի կարելի դասարան

մանել, մինչեւ կրկնակօչիկ չունենաս չը
գաս զպրոց :

ՍԻՐԱՆ. — Ինձ էլ, ինձ համար էլ
առ, հայրիկ ջան...

ՏԻԳՐԱՆ. — Շատ լաւ, բայէքս, շատ
լաւ, շարաթ օր աշխատավարձ կ'ստանամ
և կ'առնեմ...

ՏԻՐԱՆ. — Հապա մինչեւ շարաթ օր
զպրոց չերթանք : (Հեռանում են դեպի
մեծ հայրը, սխուր եւ գլխակախ եւ մրա-
փում այնտեղ) :

ՏԻԳՐԱՆ. — Մայրի՛կ շուտ արա, մի
պատառ հաց տուր, ես շտապում եմ,
չա՛տ չեմ կարող սպասել :

ՄԱՇՕ. — էլի ո՞ւր :

ՍՕՆԱ. — Ո՞ւր պիտի երթաս այս կէս
գիշերին, այս բուք ու ցուրտին, գոնէ քո
տաք շունչով այս սենեակի ցրտութիւնը
մեղմացնելու համար մի՛ գնայ :

ՏԻԳՐԱՆ. — Ո՛չ, պիտի երթամ, խօս-
տացել եմ, կ'սպասեն ինձ :

ՍՕՆԱ. — Ո՞վ է սպասում, միթէ՞ այդ
սպասողները մեզնից աւելի թանգ են քեզ
համար :

ՏԻԳՐԱՆ. — Սպասողները ինձ նման-
ներ են, ձեզ պէս անբաղդ, թշուառ հարա-
զամների, թանկագլխների տէր ու ապա-
ւէն : Եւ նրանք, մենք, հաւաքուում ենք
որ խորհինք, կերպ, միջոցներ գտնենք
այս վատթար վիճակին, այս դժոխային
կացութեան ու կեանքին, մի ցանկալի,
մի տանելի ելք գտնենք :

ՍՕՆԱ. — Այսքան տարի է դու մեր
վիճակից աւելի նւիրած ես գործին, բա-
ւական համարի գոնէ հիմա, թող մի քիչ
էլ ուրիշներ անեն, թող քո պակասը ու-
րիշներ լրացնեն :

ՄԱՇՕ. — Սօնա կարիդ ո՛չ ազդրու-
թիւն դարձրու, շտապի՛ր որդիս, հիմա
կը գայ ծառան, արդէն մօտեցաւ տաւ-
ներիկուսը :

ՎԱՐԳԱՆՈՅՇ. — Եղբայր Տիգրան,
հապա՛ ի՞նչ էք մտածում անել գործա-
դուլի, բանտարկուած ընկերների ազա-
տութեան համար :

ՏԻԳՐԱՆ. — Վճռուած է ցոյց անել :
ՎԱՐԳԱՆՈՅՇ. — Ե՞րբ և ի՞նչպիսի
ցոյց :

ՏԻԳՐԱՆ. — Բնական է ցոյցը կը լինի խաղաղ, անզէն, ևսկ թէ երբ կը լինի, այդ պիտի վճռուի այս գիշերայ ժողովում:

ՎԱՐԳԱՆՈՅ. — Խնդրում եմ ինձ չմտնաս, ես կամենում եմ դրօշակակիրներից մէկը դառնալ:

ՄԱՇՕ. — Հէնց միայն դու էիր պահաս, գործիդ նայի՛ր:

ՎԱՐԳԱՆՈՅ. — Հազա ի՞նչ ես կարծում մայրիկ, առանց մեր աշխատակցութեան, մեր մասնակցութեան, այս մեծ, այս համամարդկային գործը կարո՞ղ է իրագործուիլ:

ՍՕՆԱ. — Մի գնա Տիգրան, մի՛ մի դժբաղդացնի մեզ, մէր փոքրիկները, վերջապէս մի օր այնտեսակ փորձանքի կը հանդիպիս որ փրկուելու ճար չի լինի: Դու ես ասում թէ սարսափելի խտութիւններ են գործադրում. թէ ամենքին անխտիր ձերբակալում են, ծեծում և սպաննում, ասա՛, այս կէս գիշերին երբ դու՛ւ դուրս ես գալիս, չի՞ կարող պատահել որ գոհ գնաս որ և է արկածի:

ՄԱՇՕ. — Ես չեմ թողնի որ երթաս, չէ՛, չպիտի երթաս, ես կ'ընկնիմ ճամբիդ վրայ, մայրական կուրծքովս թնւմբ կը ձեւացնեմ, և եթէ դու սիրտ կ'անես, այն ատեն կոխտար ինձ, ասնասակ սուր մօր սիրտը և ազա անցի՛ր ու գնա... Ես կը զարթեցնեմ քնից քո՛ փոքրիկներին, նըրանց լաց ու ալաղակով քո ճամբի երգը կը յօրինեմ, և դու զաւակ, զաւակների նայր, եթէ կամենում ես քարացիր, արհամարանք սնուցանիր այս ամենի հանդէ՛ղ...

ՏԻԳՐԱՆ. — Լսիր մայր, և դու Սօնա՛, դուք ձեր այդ բուռն սիրով, ձեր խանդակա՛յ խիպչելով վերաբրումնքով իմ բարոյական մահուան գերեզմանն էք փորում... Մայր, ամուսին, հարազատներ, զուկի հարազատի գերեզմանափորներ... սեպհական ձեռքով և գիտակցութեամբ սերած անձի անվերադարձ կորուստը նիւթի... Մտածեցէ՛ք մի անգամ, ինչքան ծանր է այդ, որքան դառն, որքան անհարազատ և անծանօթ մեր հասկացողու-

թիւններին և սկզբունքներին... (տրչում է սեճեակում մտախորհ): Եւ այս դառն պայմանները իմ առաջ ցցում են այն ժամանակ, երբ պարտականութեան հզօր ձայնը ամենաուժեղ կերպով հնչում է և դարձաւոր շիրիմների միջից անգամ դուրս է կանչում պայքարի մարդկանց... Դուք կամենում էք կտրել, խոչընդոտ դառնալ իմ ճամբին այն ժամանակ, երբ ընդարձակաւաւ երկրի մէկ ծայրից միւս՝ համատարած մահ ու սարսափ է, երբ կախազանների չւանների ճրրոցը, գնդակների սուբումը, թնդանօթների որսաը, սրերի շաչիւնը Սօցիալիզմի մահերգն են հնչեցրնում, երբ բանտերի ու քարտուղայրերի տամուկ ու մթին ներքնայարկերից մեր բիւրաւոր ընկերներն անքոցն ու կոչը մեր լսելիքներին դադար չեն տալիս...

ՍՕՆԱ. — (Հեկեկալով) Լա՛ւ, երբ այդ բոլորը այդպէս սեւ են, այդպէս գժօխաշին, մենք ի՞նչպէս կարող ենք թոյլ տալ քեզ որ գնաս, և դրանց կերակուր դառնաս, և միթէ մեր սրածը վա՞տ է...

ՏԻԳՐԱՆ. — Կէս ճամբին, դժուարութիւնների առաջ կանգ առնել մնալը, առարիութիւն է, ընկերների գործը կիսատ թողնելը, աններելի յանցանք է, ես ցաւում եմ ասել որ ձեր պահանջածներն էլ սրանք են. ո՛չ, ո՛չ, ես կ'երթամ, ես կանգ չեմ առնել. դէպ ի գո՛րծ, դէպ ի պարտականութիւն, ահա՛ այն սրբազան հրաւերի, այն մարդանէր կոչի հնչիւններ, որոնք անդադար երգում ու կանչում են ինձ, և ես լսում եմ. ես չեմ որ առանց պատասխանի, առանց արձագանգի պիտի թողնեմ... :

ՄԱՇՕ. — (Մի կողմ, լալագին, ձեռները կցած) Անկարելի է սրան արգելիլ, անկարելի է... ի՞նչ անեմ ես... երիտասարդ հարս, ջահել քոյր... երկու սիրասուն անմեղ փոքրիկներ... ծերունի ծնողք ապաւինած են իրենց միակ կերակրող, պահպանող ձեռքին, և նա գնում է... Երեւակայել որ նրանից զրկոււմ ենք, որ նրան բանտարկել են և կամ մի այլ փորձանք է եկել գլխին... ո՛չ, ո՛չ, այդ չի

լինի... պապանձելի՛ր, լալկելի՛ր լեզու,
 ինչո՞ւ ես դառնում բերնիս մէջ, ինչո՞ւ
 չես այրում այդ սոսկալի խօսքերը ար-
 տասանելիս... (Քամին փչում է, Տիգրանը
 շարունակում է Երջիլի եւ ձեռները շփել.
 լաւում է սուլիչների իրար յաջորդող ձայ-
 ներ, սենեակում ամենքը ցնցում են, գոր-
 ծերը բողբոջում եւ վազում դէպի դուռն ու
 պատուհանները... դրսից ոտնաձայներ հե-
 քրգիտէ բարձրանում են:)

ՄԱՇՕ. — Պատուհանի մօտից սարսա-
 փած, ձեռները գլխին զարնելով վազում
 է դէպի սենեակի խորքի եւ ընկնում ծուն-
 կերի վրայ) *Տունս քանդուկաց...* արեւս
 խաւարեց... եկան (Բարձրաձայն լաց է
 լինում, փոքրիկները արթնանում են եւ
 միանում լացին, դէս ու դէն փախչելով):

ՏԻՊՐԱՆ. — Այսպէ՛ս ահա, եկան ու
 կը տանին... չսպասեցին ինձ...

ՏԻՐԱՆ. — } Ո՞վ է գալիս... գողե՛ր
 են, աւազակներ թէ մար-
 ՍԻՐԱՆ. — } դասպաններ. ո՞ւմ կը
 տանին...

(Ոստիկանապետը դուռը հրելով ներս է

մտնում, զինուորների գլուխները երեւում
 են դռնից եւ պատուհաններից, քամին
 փչում է, ցրտից եւ վախից ամենքը դողում
 են, փոքրիկները ծնողների հղանցքների
 սակն են պահւրճում. մի պահ ֆարացած
 լուռփիւն):

ՊԱՏՅԻՆՔ Պ.

Նոյն եւ ոստիկանապետ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ. — (Սառն անտաքե-
 բուրեամբ) Ո՞վ է Տիգրան Մետաղեանը այս
 տան մէջ:

ՏԻՊՐԱՆ. — (Հպարտ եւ անալլալ) Ես
 եմ պարտն ոստիկանապետ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ. — (Գրպանից մի քուղը
 է հանում ու կարդում) Յանուն հրամա-
 նատար նահանգապետի և արդարադա-
 սութեան դուք ձերբակալուած էք, առաջ
 անցէք: (Քարացած, անխօս եւ շարուն
 լուռփիւն, սարսափուն եւ զարմացած
 դեմքեր... ոստիկանապետը շուրջն է նա-
 յում): Նո՛ւ, քեզ եմ ստում, շտապիր...

(Նրանք դանդաղ դեպի դուռն են շարժ-
ւում, մայրը ընկնում է դրան առաջ և
լացակում աղաղակում):

ՄԱՇՈ. — *Ո՞ւր ես տանում, Աստուած .
չեմ տայ, չեմ թողնի...* (Փոփոխները բռ-
նելով Տիգրանի ձեռները և փեշերը, կան-
չում են՝ մի՛ գնա հայրիկ... մի՛ սանիք հայ-
րիկին):

ՈՍՏԻԿԱՆ. — *Զօրքեր, ներս մտե՛ք և
դէ՛ն շարտեցէք այս անդգամներին:* (Ներս
են գալիս Մաթօին վերցնում և ֆարս են
սալիս, փոփոխներին դես ու դեն հրում,
և Տիգրանին հրելով սանում. քամին շա-
րունակում է գոռալ, ժամը 12 է զար-
նում, դրան առաջ յայտնում է սպասա-
ւոր Աւիկը):

ԱԻԻԿ. — *Տիկինը խիստ զայրացել է,
չըջաղգեսան է ուղում, պարահանդէսի
ժամանակն է:*

(Առուքիւն սենեակի մեջ, խորին հե-
կեկանքներ, սարսափից դես ու դեն ըն-
կած, ապուռ ու ֆար են կտրած ամենք:
Հովը փչում է, դռները իրար զարնում,

հրազը մարում է, մի ֆանի վայրկեան խա-
ւարի մեջ գերեզմանային լուսքիւն: Պաս-
կեր, բենկալեան կրակով: Վարագոյրը
մեղմօրէն իջնում է):

Վ. Ա. Ր. Ս. Գ. Ո Յ Ր

Բաքու, 1909 Յունվար 1

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text at the top of the page, possibly a title or header.

- 1. ...
- 2. ...
- 3. ...
- 4. ...
- 5. ...
- 6. ...


Handwritten text, possibly a section header or sub-section.

Handwritten text, possibly a paragraph or a list item.

Handwritten text, possibly a section header or sub-section.

Handwritten text, possibly a paragraph or a list item.

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՈՐԾԵՐԸ



	ՂՐԶ	ՎՅԵ
1. Հասակ	1	20
2. Կարմիր օրեր (պատկերազարդ)	6	
3. Դատաստան	2	
4. Վահե	2	
5. Գիւցազնուսից	3	
6. Գարձեալ մէկը (Թատերդ.)	1	

Մօտիկ օրերուս կը հրատարակուին

ԵՕԹՆ ՀՈԳԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒՀԻՆ

Մինչև Յունիսը յոյս կը սեւեկն զանազան ժամանակներ քերքերի մէջ սպրած եւ ցարդ անհիպ, վկայիկների եւ պատմաւածների հաւաքածուն:

Ստանալու համար դիմել՝

Կ. Պոլիս, Զաքարիա Գլուխեան եւ Ա. տարազտը՝ Յ. Գապարեանի կեդրոնական գրադաճառներին :

304

6283

— ❁ — ԳԻՆ | ՂՐՈՒՇ — ❁ —

2013

